ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

7.07.2020
345-81

ՀՀ Ազգային ժողովի նախագահ
պարոն Արարատ Միրզոյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Միրզոյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել ԱԺ նախագահի՝ 2019 թվականի կարգադրությունների պատճենները:

Նշենք, որ ԻԱԿ-ը համանման տեղեկատվության պահանջ ներկայացրել է ՀՀ ԱԺ նախագահին դեռևս 2013 թվականին և, ստանալով թերի պատասխան, բողոքարկել է ՀՀ Վարչական դատարան: ԱԺ նախագահի կարգադրությունները լիարժեք ԻԱԿ-ին տրամադրվեցին դատական որոշման հիման վրա, ինչպես նաև ՀՀ վարչական դատարանի կայացրած վճռի համաձայն՝ ԱԺ-ի աշխատակազմի ղեկավարը ենթարկվեց վարչական պատասխանատվության 50.000 ՀՀ դրամի չափով:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան